Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի
տնօրեն Պ. Ավետիսյան
10. 07. 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Հայկարամ Հակոբյանի «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում (Ք.Ա. IV-V դդ. Ք.Ծ.)» ատենախոսության մասին

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Հին Հայաստանի հնագիտության բաժնի 09. 07. 2020 թ-ի նիստում քննարկվեց ՀՀ ԳԱԱ ՊԻ աշխատակից Հ. Հակոբյանի «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում (Ք.Ա. IV-V դդ. Ք.Ծ.)» վերնագրով ատենախոսական աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ:

Նիստին մասնակցում էին բաժնի վարիչ Մ. Զարդարյանը, գիտաշխատողներ Ի. Կարապետյանը, Ա. Կանեցյանը, Գ. Քոչարյանը, Հ. Մարգարյանը, Ռ. Փալանջյանը, Հ. Գյուլամիրյանը, Ս. Մուրադյանը:

Ելույթ ունեցան Ի. Կարապետյանը, Գ. Քոչարյանը, Հ. Մարգարյանը, Ռ. Փալանջյանը, Մ. Զարդարյանը: Նիստի մասնակիցներն արձանագրում են հետևյալը:

Սույն ուսումնասիրությունը նվիրված է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններին Մեծ Հայքի թագավորության գոյության ժամանակրջանում՝ նրա ձևավորման սկզբից մինչև անկումը: Աշխատանքի հենքն է հայ և օտար գրավոր աղբյուրները:

Ընտրված թեման հետաքրքիր է և պատմագիտության տեսանկյունից շատ կարևոր: Այն տարողունակ է իր բազմաթիվ հարցադրումներով և դրանց տրվող բովանդակ և բազմաշերտ մեկնաբանություններով: Միժամանակ, հիմնահարցերի քննությունը բարդանում է նաև երկար, մոտ 800 տարի ընդգրկող ժամանակահատվածով: Նշված ժամանակաշրջանում գոյատևել և իրար են հաջորդել Մեծ Հայքի տարածքն ընդգրկող պետական միավորներ, թագավորություններ, որոնց զբաղեցրած տարածքներներն ու սահմանները հաճախ փոփոխվել են: Այդ ընթացքում հանդես են եկել տարբեր հասարակական ֆորմացիաներ, մշակութային և կրոնա-գաղափարաբանական համակարգեր:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է ընտրված թեմայի արդիականությունը և շեշտում այն հանգամանքը, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները մարդկային պատմության բոլոր փուլերում, մինչ այսօր կարևոր տեղ են զբաղեցրել պետական կառավարման գործում, իսկ բուն ուսումնասիրության համար ընտրված ժամանակահատվածը հագեցած է բուռն պատմական իրադարձություններով, որոնց բովով անցել, ձևավորվել և մեզ է հասել հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների համակարգը: Հեղինակի համոզմամբ, այդ խնդրի ուսումնասիրությունը ներկա գլոբալիզացիոն գործընթացների պայմաններում կարևոր է սեփական ժառանգությունը ամրապնդելու և զարգացնելու համար:

Ատենախոսության Ներածությունում ներկայացված են նաև հետազոտության առջև դրված նպատակներն ու խնդիրները, այն է՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների փուլային վերլուծությունը Մեծ Հայքի թագավորության սկզբնավորումից (Ք. ա. 331 թ.) մինչև նրա անկման ժամանակը (Ք. հ. 428 թ.):

Այստեղ հեղինակը ներկայացնում է նաև աշխատանքի աղբյուրագիտական հենքը: Դրա կորիզն են կազմում հունա-հռոմեական, հայ միջնադարյան պատմիչների աշխատությունները, ինչպես նաև հին արևելյան (շումերական, աքադական, խեթական, ասուրական), ուրարտական, արամեական, հունական վիմագրության տվյալները: Օգտագործվել են Աստվածաշնչի՝ Հին և Նոր կտակարանների գրքերը, ինչպես նաև որոշ հնագիտական և դրամագիտական նյութեր: Սակայն այս պարագայում անհասկանալի են հեղինակի կողմից աղբյուրագիտական հենքի շրջանակներում մի շարք հայրենական պատմաբանների, այդ թվում ՝ Հ. Մանանդյանի, Ն. Ադոնցի, Ս. Երեմյանի, Ռ. Մանասերյանի, Ա. Մովսիսյանի, Ս. Հմայակյանի և այլոց մենագրությունների ու հոդվածների հղումները:

Առաջին գլուխն է «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները մինչարտաշիսյան ժամանակաշրջանում», որը բաժանված է ենթագլուխների ըստ ժամանակագրական սկզբունքի: Առաջին ենթագլխում «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության պատկերացումը ազգածին նահապետի մասին ավանդազրույցներում»: Ըստ հեղինակի ներածության մեջ ներկայացված մեթոդաբանության՝ այստեղ օգտագործված է ծագումնաբանական մեթոդը: Քննարկվում են Մովսես Խորենացու և XI դ. վրաց պատմիչ Լեոնտիյ Մրովելու մոտ պահապանված Հայկի և Բելի, Արայան Արայի, Անուշավան Սոսանվերի ավանդազրույցների առանձին պատառիկները, ըստ որոնց հեղինակը իր համոզմունք է հայտնում, որ հայոց պատմության վաղնջական շրջանում արդեն դրսևորվում են թեոկրատական պետության հիմքերը, որի պայմաններում աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կենտրոնացած էին մեկ անձի,

թագավորի ձեռքում, սակայն չէր ընդունվում ապրող կառավարչի պատամունքը: Այս իրողությունը գոյատևում և ժառանգվում է մինչև Տիգրան Մեծի գահակալումը:

Այս եզրահանգումը, նման աղբյուրագիտական բազայի պայմաններում մեր կարծիքով հնչում է հապճեպ, թեև զուրկ չէ որոշ ռացիոնալ բովանդակությունից: Խորհուրդ կտայինք նման պնդումը ներկայացնել հիպոթեզի տեսքով՝ նկատի ունենալով փաստագրական հենքի և համեմատական նյութի սակավությունը, նկարագրվող իրադարձությունների վաղնջականությունը և այլն:

Դիտողության կարգով պետք նշել, որ հեղինակի կողմից վերը նշված բաժնում բազմիցս օգտագործված «հայոց ավանդական պատմագրություն» ձևակերպումը, որի տակ նա հասկանում է հայ միջնադարյան պատմագրության, մասնավորապես Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված ավանդազրույցների երբեմն ոչ պրոֆեսիոնալ մեկնաբանությունները, կարիք ունի ավելի հանգամանալից քննարկման և ուղղակի, այլ ոչ ընդմիջարկված հղումների, քանի որ վերջիններս կարող են խեղաթյուրել բերվածի իմաստային ընկալումը:

Նշենք նաև, որ նշված ենթագլխում բացակայում են Արմեն Պետրոսյանի հեղինակած հայ ժողովրդի ծագումնաբանության, հայկական դիցաբանության և առասպելաբանությանը նվիրված նորագույն աշխատությունները, որոնցում քննարկված են թեմայի հետ հաճախ անմիջապես աղերսվող պրոբլեմները:

Երկրորդ ենթագլխում քննարկվում են Հայկական լեռնաշխարհի Ք. ա. III-II հազ. երկու պետական միավորումների Արատտայի և Հայասայի կառավարման բնույթի և առանձնահատկությունների խնդիրը: Սակայն և առաջինի, և երկրորդի դեպքում գրեթե բացակայում է այն փաստագրական նյութը, որը հնարավորություն կտար քննարկելու հիմնախնդիրը և կատարել եզրահանգումներ: Չնայած դրան, ատենախոսը համոզված է, որ «սեպագրական աղբյուրները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհում III-II հազարամյակներում… փաստում են ավանդական պատմագրության այն տեղեկությունները, որ <u>հայկական իրականությունում</u> (sic ! ?), դեռևս հնագույն ժամանակներում չէր ընդունվում կառավարող անձի պաշտամունքը, իսկ հոգևոր և աշխարհիկ իշխանությունները կրում էր միևնույն անձը» (էջ 22, 143): Տվյալ ժամանակաշրջանին վերաբերող նման գնահատականները կարիք ունեն հավելյալ փաստական հիմնավորման և առավել կշռադատված արժևորման:

Ի դեպ, Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող վաղագույն պետական կազմավորման Հայասայի պետական կառավարման և կառուցվածքի խնդիրների վերլուծության համար ճիշտ կլիներ օգտվել այն հազվագյուտ նյութերերից, որոնք պարունակում են Հայասային վերաբերող սեպագիր արձանագրություններում և իրենց մեկնաբանություններով ներկայացված են Ա. Քոսյանի «Մ. թ. ա. XIV դ. խեթա-հայա-

սական միջպետական պայմանագրերը» վերջերս լույս տեսած ֆունդամենտալ աշխատության պրակներում:

Հաջորդ ենթագլուխում, որը նվիրված Վանի թագավորության աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերություններին, ատենախոսը շուրջ 16 էջի սահմաններում, հենվելով ասուրական և ուրարտական սեպագիր արձանագրությունների, ուրարտական պատկերագրության տարբեր տվյալների և, հատկապես Խալդիի՝ որպես գերագույն աստծո և նրա էության երկվության մասին եղած կարծիքների և տեղեկությունների վրա, փորձում է հիմնավորել մի շարք գաղափարներ: Դրանք են՝ ա. Վանի թագավորությունում արքայական նախնիների պաշտամունքի գոյությունը, բ. Խալդիի պաշտամունքի զուգակցումը արքայատոհմի նախնու պաշտամունքի հետ, գ. ապրող թագավորի պաշտամունքը, ինչպես նաև առանձին քրմական դասի գոյությունը, որը հեղինակի բնորոշմամբ ուներ «նվիրապետական» աստիճանակարգ, որի գլուխ կանգնած էր նույնպես արքան: Այս գաղափարները և կարծիքները, որոնք վերջերիս տեղ են գտել որոշ ուրարտագիտական աշխատանքներում, պահանջում են առանձին, ավելի խորը ուսումնասիրություն: Նման ծավալի նյութի շարադրությունը դուրս է ատենախոսության շրջանակներից: Վաղնջական և առաջին պետական միավորումներում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունների հարցերի քննությունը կարելի էր ներկայացնել ավելի վաղ, առանձին հոդվածով, որի արդյունքները իրենց արտացոլումը կգտնեին ատենախոսության մեջ, որպես քննարկվող խնդրի նախաբան:

Հաջորդ ենթագլուխը վերնագրված է «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Մեծ Հայքում Երվանդական դարաշրջանում (Ք.Ա. IV-Ք.Ծ. III դարեր)»: Այստեղ ատենախոսը դարաշրջանը բաժանում է երեք փուլերի՝ Ք.Ա. VII դ. վերջից մինչև 521 թ., Ք.Ա. 521-331 թթ., Ք.Ա. 331-201 թթ. (էջ 38): Սակայն հարց է ծագում, ինչպես է որ VII-VI դարերը տեղավորվում IV-III դդ. սահմաններում? Նկատենք նաև, որ հեղինակի կողմից ներկայացված Երվանդունյաց դարաշրջանի ենթափուլերի, ինչպես նաև հաջորդ Հայոց արքայատոհմերի ժամանակագրական բաժանումը, փաստացիորեն կրկնում է Մ. Զարդարյանի կողմից դեռևս 1996, 1997, 2016 թթ. աշխատություններում ներկայացված ժամանակագրական սանդղակը, (մշակված տեսական, պատմաքաղաքական և պատմամշակութային չափումների հաշվառմամբ), սակայն առանց վերջիններիս հղման:

Շարադրանքը սկսելիս Հ. Հակոբյանը նկատում է, որ առաջին երկու փուլերի սահմաններում չկան տեղեկություններ իրեն հետաքրքրող խնդրի վերաբերյալ, ուստի նա անմիջապես անցնում է երրորդ փուլի՝ Ք.ա. 331-201 թթ. նյութի շարադրանքին: Այստեղ ատենախոսը թեման քննարկելիս որպես հիմք է վերցնում երկու փաստա-

գրական տվյալ՝ Արմավիրի հունարեն վիմագրերում առկա քրմապետ Միթրասի և թագավոր Եբրոնտեսի (նույն Երվանդի) անունների հիշատակումները: Վերջինս Մովսես Խորենացու կողմից հիշատակված Երվանդ Վերջին թագավորն էր: Տեքստը քննարկվում է Հ. Մանանդյանի ընթերցմամաբ և մեկնաբանությամբ: Ինչպես հայտնի է, այս աղբյուրները բազմիցս ուսումնասիրվել և քննարկվել են հայրենական հայագիտության և անտիկագիտության մեջ և ստացել իրենց արժանի գիտական մեկնաբանությունը: Ատենախոսը նյութը քննարկելիս հանգում է այն ճիշտ եզրկացությանը, որ նշված ժամանակաշրջանում գոյություն ուներ հոգևոր և աշխարհիկ իշխանության հստակ բաժանում և միաժամանակ, քաղաքական և հոգևոր իշխանությունը այնուամենայնիվ կենտրոնացած էր մեկ թագավորական տոհմի ձեռքում:

Այստեղ, սակայն, հեղինակը շտապում է ասել, որ հենց Երվանդունիների ժամանակ է տեղի ունեցել անցումը թեոկրատիայից դեպի աշխարհիկ պետություն /էջ 43/: Նման եզրահանգումը հնչում է որպես հայտարարություն: Բանն այն է, որ հելլենիստական մշակույթի երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, մինչև քրիստոնեության ընդունումը երկրի թագավորը և առաջնորդը երկրի գերագույն քուրմն էր: Նույն ինքը, հեղինակը Արշակունիների ժամանակաշրջանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունը քննարկելիս, բերում է այն հայտնի օրինակը, որ Տրդատը կրում էր նաև երկրի գերագույն քրմի տիտղոսը:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Մեծ Հայքում Ք.Ա. II-I դդ.»: Առաջին ենթագլխում քննարկվում են այդ փոխհարաբերությունների բնորոշ գծերը հելլենիստական երկրներում, քանի որ Մեծ Հայքը գտնվում էր հելլենիստական մշակույթի ազդեցության ոլորտում: Հեղինակը նպատակ է հետապնդում մի քանի էջի սահմաններում ներկայացնել հելլենիստական ընդհանուր քաղաքակրթական, քաղաքական, պետական կառավարման, կրոնա-հոգևոր ոլորտի այն գլխավոր գծերն ու տարրերը, որոնք կարող էին ազդեցություն ունենալ Արտաշեսյան Հայաստանի վրա: Բերված առանձին օրինակները վերցված հելլենիստական տարբեր թագավորությունների (Սելևկյան պետություն, Պտղոմեոսյան Եգիպտոս, Բակտրիա և այլ) քաղաքական պատմությունից, հնագիտությունից, դրամագիտությունից, չեն ներկայացված համակարգված տրամաբանաան շղթայի մեջ, որպեսզի հնարավոր լինի աղերսներ գտնել հելլենիստական Հայաստանի աշխարհիկ և հոգևոր համակարգի հետ և լուսաբանել դրանց փոխհարաբերությունները: Նույն ենթագլխում կան նաև բազմաթիվ հունարեն անվանումների, դիցանունների և տերմինների հայերեն սխալ տառադարձություններ և բնութագրումներ, օրինակ՝ բնության, գարնան, պտղաբերության աստվածունհի Դեմետրեն անվանված է երկրագործական աստված Դեմետրիոս, Դիոնիսոսը Դիոնիսիոս /էջ 52/, աեթոլիացիներ էտոլիացիների Եպեիրոս

Էպիրոսի փոխարեն /էջ 55/, Պտղոմեական իշխանություն, Պտղոմեականներ Պտղոմեսյանների իշխանություն, Պտղոմեոսյաններ եզրույթների փոխարեն /էջ 58/ և այլն, հավանաբար, անգլիալեզու հրատարակություններից թարգմանված լինելու հետևանքով: Էջ 50-ում գրված է- «հելլենիզմ տերմինը գիտական շրջանառության մեջ է մտցրել ….Յ. Գուստավը, (հղում 174 Бенгтсон Г., Правители эпохи эллинизма, Москва, 1982, с. 3»), մինչդեռ գերմանացի հայտնի պատմաբանի ազգանունն է Դրոյզեն, լրիվ անունը՝ Յոհան Գուստավ Դրոյզեն և այլն:

Երկրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Մեծ Հայքի թագավորությունում» հեղինակը գրում է, որ Հայաստանը գտնվում էր հելլենիստական մշակույթի ոլորտում և հելլենիստական տիպի թագավորություն էր: Նա վերլուծում է Արտաշես Ա-ի և Տիգրան Բ-ի վարած ներքին, արտաքին և կրոնական քաղաքականությունը՝ ուղղված երկիրը հելլենիստական մշակույթի ոլորտ ներգրավելու համար: Այստեղ Հ. Հակոբյանը հենվում է հիմնականում Մովսես Խորենացու տվյալների, որոշ դրամագիտական և հնագիտական նյութի և Կոմմագենեի Նեմրուդ լեռան քանդակագործական որոշ նմուշների վրա: Հանգում է այն ճիշտ եզրակացության, որ նշված ժամանակաշրջանում գոյություն ուներ արքայի դերի գերազանցություն աշխարհիկ և հոգևոր հարաբերությունների մեջ: Գոյություն ուներ նաև թագավորական նախնիների և ապրող թագավորի պաշտամունք, որը սերում էր դեռևս վաղնջական ժամանակներից: Որպես թերություն նշենք էջ 79-ում տեղ գտած «պարսկական և հելլենիստական ազդեցություն» արտահայտությունը, պետք է լինի աքեմենյան և հելլենիստական ազդեցություն:

Երրորդ գլխում քննարկվում են հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները I-III դդ.: Այդ ժամանակ անկում ապրեց Արտաշեսյան հարստությունը և գահն անցավ հայ Արշակունիներին: Սրան նախորդող փուլում Հայաստանը գտնվում էր Հռոմի քաղաքական ազդեցության տակ, իշխում էին Հռոմի կողմից նշանակված դրածոները և տարածված էր Հռոմի կայսեր պաշտամունքը: Հեղինակը անդրադարձ է կատարում այդ ժամանակաշրջանի պատմության մի շարք այն դրվագներին, որոնք, նրա կարծիքով, արտացոլում են ժամանակի հոգևոր և աշխարհիկ ոլորտների փոխհարաբերությունները: Դա է՝ Տակիտոսի հաղորդման համաձայն, Տրդատ Ա-ի ուղևորությանը Հռոմ, Ներոնի ձեռքից թագ ստանալու դրվագը և Տրդատ Ա-ի գերագույն քուրմ լինելու հանգամանքը: Ատենախոսի կարծիքով, Տրդատի օրոք Հայաստանում աճում է հոգևոր իշխանության դերը, որի արտահայտությունն էր Վահունիների տոհմի քրմապետական պաշտոնի վերականգնումը, որը, ըստ Մովսես Խորենացու վկայության՝ նրանք կորցրել էին Արտաշեսյանների օրոք /էջ 86-87/: Անդրադարձ է կատարվում նաև Տրդատ Գ-ի ժամանակաշրջանին: Հեղինակը վկայակոչելով Ագաթանգեղոսին

և Զենոբ Գլակին, կարծիք է հայտնում, որ նշված ժամանակահատվածում ծայրահեղ սրվել էին հզորացած քրմության և իշխող դասի հարաբերությունները: Այս գաղափարը հեղինակի կողմից հավանաբար ներկայացվում է հետագա իրադարձությունների գնահատման տեսանկյունից, կապված քրիստոնեության հռչակման հետ:

Վերջին չորրորդ գլուխը վերաբերում է 301-428 թթ. հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններին: Որպես քննարկվող թեմայի նախաբան, հեղինակն առաջին ենթագլուխներում քննարկում է այդ փոխհարաբերությունների Հինկտակարանային և Նորկտակարանային մոդելները, բերելով բազմաթիվ դրվագներ Աստվածաշնչի տարբեր մասերից և գրքերից: Հ. Հակոբյանը գտնում է, որ այդ դրվագները օգնում են վերականգնելու Հայաստանում 301 թ-ին մուտք գործած քրիստոնեության պայմաններում նոր հոգևոր իշխանության գաղափարական հենքը: Նման մոտեցումը, մեթոդաբանական և գաղափարախոսական տեսանկունից, արդարացված է:

Երրորդ ենթագլխում («Պաշտոնական նոր կրոնի՝ քրիստոնեության մուտքը Մեծ Հայքի պետական կառավարման համակարգ») Հ. Հակոբյանը ներկայացնում է նոր կրոնի ընդունումը՝ պայմանավորված արտաքին և ներքին քաղաքական իրավիճակով և Սասանյան Պարսկաստանի կողմից երկրին սպառնացող քաղաքական և կրոնական ուծացման վտանգով: Հեղինակը գրում է, որ քրիստոնեության ընդունումը Հայաստանում նպաստեց կենտրոնաձիգ իշխանության ստեղծմանը և պետականության ամրապնդմանը:

Հիմնախնդրի քննարկումը սկսվում է միջազգային իրավիճակի պատմական ակնարկով, Սասանյան Պարսկաստանի և Հռոմի միջև հակամարտության, Հայաստանում տեղի ունեցած որոշ պատմական իրադարձությունների նկարագրությամբ և այլն: Հեղինակը քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանը բաժանում է չորս հիմնական փուլերի, առաքելական շրջանի քարոզչություն: Տրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակում: Ներսես Մեծի կողմից հայ ժողովրդի լայն զանգվածներում քրիստոնեության արմատավորում և Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի միջոցով քրիստոնեական կրոնի, հեղինակի արտահայտությամբ՝ «հայացում»: Հ. Հակոբյանը որպես եզրակացություն գրում է - «128 տարի տևած աշխարհիկ իշխանության հետ փոխհարաբերությունների ընթացքում տարված հսկայական ջանքերի շնորհիվ եկեղեցին Մեծ Հայքում ներկայացնում էր ոչ թե զուտ հոգևոր դաս, այլև մի ողջ ժողովուրդ» /էջ 49-50/:

Այս շարադրանքում հեղինակը մեծ տեղ է հատկացնում հատկապես Ներսես Մեծի կյանքին, լայնածավալ գործունեությանը և այն բարենպաստ դերին, որը նա ուներ երկրի թե աշխարհիկ, թե հոգևոր կյանքում: Անժխտելի է քրիստոնեության ընդունման և

տարածման դրական դերն ու նշանակությունը, որը կարմիր թելի նման անցնում է ողջ շարադրանքի մեջ:

Հիմնախնդրի վերլուծության համար շատ կարևոր են նաև բոլոր այն դրվագների վերլուծությունը, որոնք կբնորոշեին եկեղեցու և աշխարհիկ իշխանության իրական փոխհարաբերությունները հատկապես նոր կրոնի մուտքի (սկզբնավորման) շրջանում: Այս առումով նշված ժամանակաշրջանի ուսումնասիրությունը հարուստ է բազմաթիվ սկզբնաղբյուրներով, որոնք նյութ են մատուցում Հայաստանում երկար ժամանակ պահպանված հեթանոսական կրոնի, քրիստոնեությանը դիմադրող հեթանոսական քրմերի և նրանց հետևող ժողովրդական զանգվածի մասին և այլն:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համագործակցության և միաժամանակ բախման դրվագները իրենց արտացոլումն են գտել Փավստոս Բուզանդի մոտ, Արշակ Բ-ի և Ներսես Մեծի փոխհարաբերությունների պատմության մեջ երկրի շենացման գործում: Այստեղ, որպես կարևոր դրվագ, ուշադրության է արժանի Արշակավանի կառուցման և ավերման պատմությունը: Այդ իրադարձությունների խորքային վերլուծությունը և դրանց պատամագիտական գնահատականը տրված են Երվանդ Մարգարյանի «Аршакаванская эллинистическая политея и Град Небесный Нерсеса Великого» 2007 թ. մենագրությունում:

Ատենախոսության հղումներում առկա են բացթողումներ և այլ թերություններ, հղված գրականության բազմաթիվ օրինակներ տեղ չեն գտել գրականության ցանկում և հակառակը: Աշխատանքի հետագա վերամշակման ընթացքում այս և վերը նշված նկատառումների հաշվառումը գտնում ենք անհրաժեշտ:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՀՀՀ բաժինը գտնում է որ Հայկարամ Հակոբյանի «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերությունը Մեծ Հայքի թագավորությունում (Ք.Ա. IV-V դդ. Ք.Ծ.)» ատենախոսական աշխատանքը հիմնականում բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՀՀՀ բաժնի վարիչ՝ Մ. Զարդարյան

Մ. Հ. Զարդարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի
փոխտնօրեն՝ Ա. Բորոիյան

10. 07. 2020 թ.